ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«26» ապրիլի 2021թ. № 202

## «ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 70-Ա որոշումը և «Պրոդիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող փողոցային լուսավորության թվով 370 հենասյուներ օպտիկամանրաթելային մալուխ անցկացնելու համար 37 000 ՀՀ դրամ ամսական վարձավճարով, մեկ տարի ժամկետով տրամադրել «Պրոդիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 26
ք. Սպիտակ

Հավելված

Սպիտակ համայնքի ղեկավարի

2021թ. ապրիլի 26-ի թիվ 202 որոշման

| Փողոցի անվանումը | Հենասյուների քանակը |
|---|---|
| Պանրագործների | 16 |
| Քըրք Քըրքորյան | 21 |
| Շահումյան | 25 |
| Տեր Սիմոնյան | 18 |
| Ալ. Մանուկյան | 22 |
| Երևանյան խճ. | 85 |
| Սայաթ-Նովա | 11 |
| Ս. Ավետիսյան | 36 |
| Ն. Աճեմյան | 13 |
| Մյասնիկյան | 9 |
| Շիրակի խճ. | 16 |
| Թումանյան | 19 |
| Ուզբեկական | 18 |
| Շվեյցարական | 18 |
| Առափնյա | 6 |
| Էստոնական | 13 |
| Տաշիր | 16 |
| Ոփյան | 8 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«26» ապրիլի 2021թ. № 203

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի թիվ 14-Ա որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի թիվ 14-Ա որոշմամբ Սպիտակ համայնքի սեփականություն ճանաչված՝ Ուզբեկական Կ-9 թաղամասում գտնվող 06-006-0164-0008 կադաստրային ծածկագրով 0,04164 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին, դրա վրա գտնվող 182,87 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տանը, 6,09 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակին և 9,36 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբին տրամադրել «ք.Սպիտակ, Ուզբեկական Կ-9 թաղամաս, թիվ 25/2» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«26» ապրիլի 2021թ. № 204

## ԱՐՏԱԿ ԱՂՎԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «է» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 1999 թվականի հուլսիս 9-ի թիվ 95 որոշմամբ Արտակ Աղվանի Սահակյանի ընտանիքին հատկացված Ուզբեկական Կ-4 թաղամասում գտնվող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-006-0181-0027 կադաստրային ծածկագրով 0,05152 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողի հարկի վճարման անդորրագրերը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Արտակ Աղվանի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել Արտակ Աղվանի Սահակյանի (ծնված 01.01.1975թ.) և նրա ընտանիքի անդամների՝ Տաթևիկ Լավրենտի Դանիելյանի (ծնված 07.04.1977թ.), Արմեն Աղվանի Սահակյանի (ծնված 10.11.1978թ.) և Աղվան Արտակի Սահակյանի (ծնված 10.11.2000թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Ուզբեկական Կ-4 թաղամասում գտնվող 06-006-0181-0027 կադաստրային ծածկագրով 0,05152հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ուզբեկական Կ-4 թաղամաս, թիվ 2/2 » հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«26» ապրիլի 2021թ. № 205

## ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՋԵՎԱՆ ՎԱՀԱՆԻ ՍԱՐՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 0,00992 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ և 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Քաջևան Վահանի Սարոյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0132-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի փաստացի չափը կազմում է 0,04992 հեկտար, որից 0,04 հեկտարը Քաջևան Վահանի Սարոյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,00992 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,

հողամասի վրա 1989 թվականին կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, 2003 թվականին ինքնակամ կառուցված ավտոտնակը, պարիսպը, ամառային խոհանոցը, մառանը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Քաջևան Վահանի Սարոյանի 2020 թվականի նոյեմբերի 27-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել՝ Քաջևան Վահանի Սարոյանի (ծնված 10.11.1942թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0132-0008 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի և 0,00992 հեկտար մակերեսով հողամասի վրա գտնվող 101,72 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան, 2,74 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի և 22,51 քառակուսի մետր մակերեսով մառանի նկատմամբ:

2. Քաջևան Վահանի Սարոյանի կողմից տիրապետվող 0,04 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,00992 հեկտար հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 52 378 ՀՀ դրամ (1 քմ 528 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Քաջևան Վահանի Սարոյանին:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա ինքնակամ կառուցված 21,72 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 2,03 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 17,52 քառակուսի մետր մակերեսով ամառային խոհանոցը ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Քաջևան Վահանի Սարոյանի սեփականության իրավունքը:

5. Քաջևան Վահանի Սարոյանի պատկանող Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0132-0008 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04992 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին, դրա վրա գտնվող 101,72 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տանը, 2,74 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբին, 22,51 քառակուսի մետր մակերեսով մառանին, 21,72 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին, 2,03 քառակուսի մետր

մակերեսով պարսպին, 17,52 քառակուսի մետր մակերեսով ամառային խոհանոցին տրամադրել «քաղաք Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 196» հասցեն:

6. Քաջևան Վահանի Սարոյանին.

1) համայնքի բյուջե վճարել 41 022 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Քաջևան Վահանի Սարոյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

8. Սույն որոշումից և առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը, տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.ապրիլի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«26» ապրիլի 2021թ. № 206

## ՄԱՐՏՈՒՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԱԿԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «է» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 17-ի թիվ 35 որոշմամբ Մարտուն Միքայելի Մակարյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով փոխանցված Շվեյցարական թաղամասում գտնվող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-006-0191-0026 կադաստրային ծածկագրով 0,030495 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողի հարկի վճարման անդորրագրերը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Մարինե Ավետիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել Մարտուն Միքայելի Մակարյանի (ծնված 05.10.1965թ.) և նրա ընտանիքի անդամների՝ Մարինե Սլավիկի Ավետիսյանի (ծնված 12.04.1972թ.), Լուսինե Մարտունի Մակարյանի (ծնված 12.04.1992թ.) և Լիանա Մարտունի Մակարյանի (ծնված 23.12.1996թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Շվեյցարական թաղամասում գտնվող 06-006-0191-0026 կադաստրային ծածկագրով 0,030495հեկտար մակերեսով

բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Շվեյցարական թաղամաս, թիվ 36 » հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«26» ապրիլի 2021թ. № 207

## ՄՈՒՐԱՑԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 0,01605 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, հաշվի առնելով, որ Գագիկ Դանիելյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Մուրացան փողոցի վրա գտնվող 06-006-0471-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի փաստացի չափը կազմում է 0,05605 հեկտար, որից 0,04 հեկտարը Գագիկ Գևորգի Դանիելյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,01605 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1993 թվականին կառուցված բնակելի տունը և բաց պատշգամբը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի

եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Գագիկ Գևորգի Դանիելյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել՝ Գագիկ Գևորգի Դանիելյանի (ծնված 15.07.1953թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Մուրացան փողոցի վրա գտնվող 06-006-0471-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի և 0,05605 հեկտար մակերեսով հողամասի վրա գտնվող 194,44 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան և 17,6 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի նկատմամբ:

2. Գագիկ Գևորգի Դանիելյանի կողմից տիրապետվող 0,04 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,01605 հեկտար հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 130 037 << դրամ (1 քմ 1221 << դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գագիկ Գևորգի Դանիելյանին:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Մուրացան փողոց, թիվ 123» հասցեն:

4. Գագիկ Գևորգի Դանիելյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

5. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 26
ք.Սպիտակ